# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 հոկտեմբերի 2023թ. թիվ 602-Ա

## ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ Ա.ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ՎՐԱ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձևավորման, գործունեության և տնօրենի նշանակման կարգը հաստատելու մասին» N 181-Ն որոշման հավելվածի 6-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 2023 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ 578-Ա որոշումը և հաշվի առնելով Ա.Աբրահամյանի համաձայնությունը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. «ՀՀ Լոռու մարզի Լերմոնտովոյի Ե.Ուղալցովի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունների կատարումը, մինչև մրցույթի արդյունքում տնօրենի ընտրությունը, դնել «ՀՀ Լոռու մարզի Լերմոնտովոյի Ե.Ուղալցովի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի փոխտնօրեն Ահդա Աբրահամյանի վրա:

2. «ՀՀ Լոռու մարզի Լերմոնտովոյի Ե.Ուղալցովի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի հաշվապահին՝

«ՀՀ Լոռու մարզի Լերմոնտովոյի Ե.Ուղալցովի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կանոնադրությամբ սահմանված տնօրենի լիազորությունների իրականացման համար Ա.Աբրահամյանին տալ լրավճար «ՀՀ Լոռու մարզի Լերմոնտովոյի Ե.Ուղալցովի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի տարիֆիկացիոն ցուցակով հաստատված աշխատավարձի 30%-ի չափով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հոկտեմբերի 26-ից:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

26/10/23

X

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2023թ. հոկտեմբերի 26
ք.Վանաձոր